ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, ««ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում համակարգային բարեփոխումների իրականացման օրակարգով և դրանց համար անհրաժեշտ իրավական հենքի ապահովման անհրաժեշտությամբ: ««Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքի ընդունմամբ, ըստ էության, մեկնարկել է բարձրագույն կրթության ոլորտում պետական նոր քաղաքականությունը, որի արդյունքային շրջանակը բարձրագույն կրթության վերաբերյալ սահմանված է Հոդված 1-ով հաստատված հավելված 1-ի 86-րդ մասի 13-ից 19-րդ և 23-րդ կետերով, որոնց էությունը կայանում է միջազգային մակարդակում մրցունակ, ժամանակակից աշխարհում աշխատանքի և մասնագիտական կայացման համար պատրաստ անհատի ձևավորումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական չափանիշներին համապատասխան հավաստագրումը, միջազգային վարկանիշավորման ցանկերում առաջխաղացումը, ուսանողի պատշաճ կեցության և կրթական միջավայրի կազմակերպումը, կրթություն-գիտություն կապի ամրապնդումը և համակարգի պետական ֆինանսավորման դիվերսիֆիկացումը և թիրախայնությունը: Միևնույն ժամանակ 81-րդ մասի 2-րդ կետի «ը» և «թ» պարբերություններով նախատեսվում է պետական բուհերի խոշորացում և գիտական կազմակերպությունների հետ միավորում, ինչպես նաև բուհերի կառավարման նոր մոդելների գործարկում և կառավարիչների հմտությունների բարձրացում: 82-րդ մասի 4-րդ կետի «է», «ը», «թ» և «ժա» պարբերություններով նախատեսվում են նաև բուհական կրթական ծրագրերի խոշորացում, ուսանող/դասախոս հարաբերակցության կարգավորում, ուսանողներին տրամադրվող պետական թիրախային աջակցության տրամադրում և համալսարանական ինկուբատորների և ձեռնարկատիրական էկոհամակարգի ձևավորում:

Նշված և մի շարք այլ բարեփոխումների իրականացման, ոլորտներում մի շարք միջազգային նոր զարգացումներին համահունչ ձևակերպումների և գործիքակազմերի ներդրման, ինչպես նաև որակի առավել խիստ հսկողությունը

երաշխավորելու նպատակով առաջացել է մի շարք օրենքների փոխարեն մեկ միասնական օրենք ունենալու, ինչպես նաև մի շարք հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն:

Ներկայումս ոլորտները կարգավորվում են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»[1], «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»[2], «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին»[3] և «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին»[4] օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով: Ոլորտներին վերաբերելի որոշ կարգավորումներ նախատեսված են նաև «Կրթություն մասին»[5], «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»[6], «Լիցենզավորման մասին»[7], «Հիմնադրամների մասին»[8] օրենքներով և Աշխատանքային օրենսգրքով[9] և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով:

Բարձրագույն կրթության և գիտության ոլորտները կարգավորող գործող օրենքներն ընդունվել են 15-ից 20 տարի առաջ, ինչով պայմանավորված դրանց միջև առկա են նաև որոշակի հակասություններ: Այդ օրենքների ընդունման պահից ի վեր բարձրագույն կրթության և գիտության համակարգերում իրականացվել են կարևոր կառուցվածքային և բովանդակային բարեփոխումներ՝ պայմանավորված Բոլոնիայի գործընթացին միանալու (2005թ.), Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի մաս կազմելու (2010թ.), Եվրոպական հետազոտական տարածքի շրջանակային Հորիզոն 2020 (2014թ.) և Հորիզոն Եվրոպա (2020թ.) ծրագրերում ինտեգրվելու, ինչպես նաև միջազգային կրթական և գիտական լայն համագործակցության մեջ ընդգրկվելու հանգամանքով: Այդ բարեփոխումներից շատերի իրականացման ամբողջականությունն ու արդյունավետությունն, այնուամենայնիվ, սահմանափակվում է օրենսդրական կարգավորումների բացակայությամբ կամ անբավարարությամբ:

Միևնույն ժամանակ, գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի 1902-Լ որոշմամբ հաստատված 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի շրջանակներում 2021 թվականից իրականացվող պետական քաղաքականությունը և ֆինանսավորման

---

[1] 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենք
[2] 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենք
[3] 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-135-Ն օրենք
[4] 2015 թվականի ապրիլի 7-ի ՀՕ-23-Ն օրենք
[5] 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենք
[6] 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենք
[7] 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենք
[8] 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենք
[9] 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-124-Ն օրենք

կտրուկ ավելացումը բացահայտել են նաև գիտության ոլորտի արդյունավետության որոշակի խնդիրներ, որոնց համակարգային լուծման համար անհրաժեշտ են օրենսդրական մակարդակի փոփոխություններ, մասնավորապես, ավելացվող ֆինանսավորման առավել արդյունավետ կառավարման և թիրախային ուղղորդման, ինչպես նաև համակարգային բարեփոխումների հնարավորությունների ընդլայնման և սերնդափոխությունն արդյունավետ կազմակերպելու նպատակներով:

Բարձրագույն կրթությունը տարիների ընթացքում հեռացել է հետազոտահենք կրթության օրակարգից՝ ձևափոխվելով առավելապես դասախոսությունների վրա հիմնված գործընթացի, հաճախ՝ որակի և մրցունակության էական թերացումներով: 2005 թվականից մինչ այժմ փաստացի անցում չի կատարվել բարձրագույն կրթության երրորդ մակարդակի, և չեն դրվել միջազգային արդի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման օրենսդրական հիմքերը, ինչի հետևանքով փաստացի չի գործում բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը և փոխարենը գիտական աստիճանի շնորհումը չի դիտարկվում որպես բարձրագույն կրթության մաս, այլ պահպանվում է գիտական աստիճանաշնորհման ԽՍՀՄ-ից ժառանգած երկաստիճանությունը՝ ասպիրանտուրա և դոկտորանտուրա:

Կազմակերպական տեսանկյունից գիտական գործունեությունը կազմակերպվում է հիմնականում գիտահետազոտական ինստիտուտներում՝ չնախատեսելով որևէ ինստիտուցիոնալ գործիքակազմ բուհական համակարգի հետ համագործակցության առումով, միևնույն ժամանակ, գիտական գործունեությունը առանձին է նաև տնտեսական ոլորտից, և ըստ էության, խաթարված է բուհ-հետազոտություն-տնտեսություն եռանկյունը: Տարիների ընթացքում նաև թերի իրավական դաշտի և անբավարար ֆինանսական ռեսուրսների պայմաններում ոլորտների կազմակերպական ձևերի միջև զարգացել է նաև որոշակի անտագոնիզմ, ինչը ներկայումս էապես խոչնդոտում է ոլորտների մերձեցմանը և սիներգիային:

Պահպանվում է բարձրագույն կրթության և գիտության համակարգերի ժամանակավրեպ անջրպետվածությունը. գիտության ոլորտը շարունակում է բաժանված մնալ մի կողմից ակադեմիական և գերատեսչական, մյուս կողմից՝ բուհական, իրարից խիստ տարանջատված հատվածների՝ խոչընդոտելով կրթության և գիտահետազոտական գործունեության արդյունավետ համագործակցության մոդելների ձևավորմանը, հետազոտահենք կրթական ծրագրերի իրականացմանը, բուհերում և գիտության ոլորտում երիտասարդ որակյալ ներուժի ներգրավմանը: Պետական բազային ֆինանսավորում ներկայումս ստանում են 44 գիտահետազոտական ինստիտուտներ, որոնցից 5-ը հանդիսանում են ԿԳՄՍՆ գերատեսչական ենթակայությամբ կազմակերպություններ, 3-ը՝ Էկոնոմիկայի

նախարարության և 36-ը՝ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի կազմակերպություններ: Ընդ որում, Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգը գործում է իր առանձին օրենքի շրջանակներում, որով գիտական խորհրդատվական գործառույթները համադրված են վարչարարական և ֆինանսավորման գործառույթների հետ, ինչը համակարգում ստեղծում է դե յուրե անվերահսկելի և արտաքին հաշվետվողականությունից ազատ միջավայր՝ փաստացի սահմանափակելով կազմակերպություններում մրցակցայնությունը և մասնակցայնությունը: Միևնույն ժամանակ, գիտության կազմակերպման ակադեմիական համակարգը հնարավորություն չի տալիս ֆինանսավորման առավել արդյունավետ ուղղորդմանը: Այսպես, համակարգում ներգրավված յուրաքանչյուր ավելի քիչ քան 2 գիտական աշխատակցին զուգահեռ ներգրավված է 1 վարչական կամ սպասարկող աշխատակից:





Գիտության ոլորտին հատկացվող բազային ֆինանսավորման 73% -ը ուղղորդվում է ԳԱԱ համակարգի կազմակերպություններին, սակայն Միջազգային Վեբ Օֆ Սայնս գիտական տեղեկատվական համակարգում[10] ինդեքսավորվող գիտական պարբերականներում հրապարակումների միայն 32% -ն է տպագրվել ԳԱԱ համակարգի կազմակերպությունների աշխատակիցների կողմից:

[10] https://www.webofscience.com ; որով հաշվարկվում է Գլոբալ ինովացիոն ինդեքսում գիտական գործունեության չափանիշներից՝ 6.1.4-ը.





Միևնույն ժամանակ չնայած այն հանգամանքին, որ գիտության ոլորտում պետական ներդրումներն ավելանում են, ոլորտում առկա է դեմոգրաֆիկական լուրջ խնդիր, որը դրսևորվում է 60 տարեկան և ավել տարիքային խմբում գտնվող գիտական կադրերի քանակի անկասելի նվազեցմամբ, որն, ըստ էության, ծածկվում է ոլորտ մուտք գործող երիտասարդների թվաքանակով, սակայն ինչը, ըստ էության, սերնդափոխություն չի հանդիսանում, քանի որ գիտելիքի փոխանցումը ինստիտուցիոնալ չէ:



Այսպիսով գիտական գործունեությունն առանձին կազմակերպելու ձևաչափը չի ապահովում ֆինանսավորման արդյունավետություն և կայուն սերնդափոխություն, ինչին կարելի է հակադրել բուհերում կազմակերպվող գիտական գործունեությունը, որը ավելի փոքր ֆինանսական ներդրումների դիմաց ապահովում է ավելի բարձր արդյունավետություն՝ միևնույն ժամանակ ներգրավելով էապես փոքր քանակով վարչական ռեսուրս:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության ծրագիր իրականացնելու լիցենզիա ունի 60 կազմակերպություն (յուրաքանչյուր 50000 բնակչին՝ 1 բուհ): Բուհական համակարգում իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ ամբողջ համակարգում ներգրավված ակադեմիական անձնակազմի միայն 6% -ն է հանդիսանում գիտական աշխատող, ընդ որում գիտական գոնե 1 աշխատող առկա է միայն 15 բուհերում, այսինքն մնացյալ 45 բուհերում կրթությունը իրականացվում է դասավանդման եղանակով և իսպառ բացակայում է հետազոտությունը որպես բարձրագույն կրթության անբաժան մաս:

Բուհերում դասավանդող անձնակազմի 51%-ը չունի գիտական աստիճան:

Բուհերում հիմնական աշխատող են հանդիսանում ակադեմիական կազմի աշխատակիցների 53%-ը, իսկ հիմնական աշխատող հանդիսացող և գիտական աստիճան ունեցող ակադեմիական կազմի 30% -ի տարիքը մեծ է 65-ից,

17 բուհերում համատեղությամբ և ժամավճարով աշխատող դասախոսական կազմի մասնաբաժինը հավասար կամ մեծ է 50% -ից՝ առավելագույնը կազմելով 99%:

Ուսանող/դասախոս հարաբերակցությունը միջինում կազմում է 15% (5%-35% տիրույթում՝ միջնարժեքը կազմելով 16%): Միևնույն ժամանակ, սակայն ուսանող/հիմնական աշխատող և գիտական աստիճան ունեցող դասախոս հարաբերակցությունը միջինում կազմում է 3% (0%-6% տիրույթում՝ միջնարժեքը կազմելով 3%): Սա այն պարագայում, երբ հաշվի չի առնվում այն փաստը, որ միևնույն անձը կարող է դասախոսել 2 և ավել բուհերում:

Սա նշանակում է, որ

ա. բուհական համակարգը մեծապես կառուցված է դասախոսությունների վրա, քանի որ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող դասախոսը չի կարող ապահովել նաև պատշաճ մակարդակի հետազոտական բաղադրիչ ուսանողի կրթական պրոցեսում,

բ. ուսանող-դասախոս (ակադեմիական կազմ) հարաբերակցությունը անբավարար ցածր մակարդակի վրա է, ինչը նշանակում է որ ուսանողը չունի բավարար հասանելիություն և ընտրություն դասավանդման և նյութի տրամադրման բազմազանության և առավել ևս իր հետազոտական աշխատանքի ընթացքում պատշաճ և իր կարիքներին և հետաքրքրություններին բավարար չափով համապատասխան կամ մոտ ղեկավարների,

գ. դասավանդման որակը էապես ցածր է, քանի որ ուսանողի հետ աշխատող դասախոսների կեսը չունեն գիտական աստիճան, այսինքն չունեն ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելու հավաստիք՝ այսպիսով բացառելով քննադատական և հետազոտական հմտությունների ձևավորումը ուսանողների մոտ,

ինչպես նաև բացառելով իրենց ներգրավումը որպես ուսանողների հետազոտական աշխատանքի ղեկավարների:

Հայաստանի Հանրապետության բուհերում իրականացվում են 1627 լիցենզավորված կրթական ծրագրեր որից 790 բակալավրի որակավորում շնորհող և 837՝ մագիստրոսի, ըստ որում բուհերում իրականացվող կրթական ծրագրերը ըստ տեսակների 831-ն են՝ 356 բակալավրի և 475 մագիստրոսի, ինչը նշանակում է, որ միևնույն ծրագիրն իրականացվում է մի քանի բուհերում, ինչը ինքնին խնդրահարույց չէ, սակայն գոյություն ունեն որոշակի խնդրահարույց դեպքեր, օրինակ՝ «042101.01.6 - Իրավագիտություն» կրթական ծրագիրը, որը շնորհում է «Իրավագիտության բակալավր» որակավորում՝ առկա ձևով իրականացվում է 31 տարբեր բուհերում (նույնի մագիստրոսի որակավորման ծրագիրն իրականացվում է 22 բուհերում), սրա հետ համեմատության համար հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության որևէ կազմակերպությունից «իրավունք» մասնագիտությունների խմբում 1996-2023 թվականների ընթացքում միջազգային ինդեքսավորվող պարբերականներում տպագրվել է ընդամենը 48 գիտական հոդված: «031101.01.6 – Տնտեսագիտություն» կրթական ծրագիրն իրականացվում է 27 բուհերում՝ շնորհելով «Տնտեսագիտության բակալավր» որակավորում, ըստ որում ամբողջ բնագավառում 1996-2023 թվականներին հրատարակվել է 166 հոդված: «011301.01.6 – Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունով բակալավրի կրթություն է իրականացվում 19 բուհերում, «032101.01.6 – Լրագրություն» կրթական ծրագրով՝ 17 բուհերում, «031301.01.6 – Հոգեբանություն» կրթական ծրագրով՝ 14, «011401.21.6 – Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով՝ 14 և այլն:

Օրենսդրական կարգավորման բացակայության պատճառով էապես սահմանափակված են բարձրագույն կրթության համատեղ կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները, միևնույն ժամանակ, բացակայում է օրենսդրական կարգավորումները կրկնակի որակավորման ծրագրերի համար, ինչն էապես դժվարացնում է ինչպես ՀՀ բուհերի միջև համագործակցությունը, այնպես էլ օտարերկրյա պետությունների բուհերի հետ համատեղ կամ կրկնակի որակավորման կրթական ծրագրերի իրականացումը, ինչը սահմանափակում է ուսանողների հնարավորությունները, ինչպես նաև բուհերի հնարավորությունները՝ վերանայելու իրենց կրթական ծրագրերը:

ՀՀ 38 բուհում (այդ թվում՝ 8 պետական) սովորում է 2000-ից քիչ թվաքանակի ուսանող, ինչը նշանակում է, որ բուհերը գործում են անընդհատ ֆինանսական անբավարարության պայմաններում՝ ի վիճակի չլինելով ապահովել ակադեմիական կազմի պատշաճ վարձատրություն, ապահովելու կրթական ենթակառուցվածքների

պահպանություն և զարգացում՝ ժամանակակից կրթական ծրագրեր և մրցունակ կրթական ծառայություններ մատուցելու համար, ապահովել գույքի պատշաճ պահպանություն և որևէ ներդրում իրականացնելու բուհական կրթական ծրագրերի վերանայման համար:

Այս իմաստով համաշխարհային օրինաչափություն է բուհերի խոշորացման գործընթացը, որը տարբեր պետություններում իրականացվում է տարբեր տրամաբանությամբ և ժամանակահատվածում, ինչի նպատակը ռեսուրսների ճիշտ կառավարումն է՝ հանուն բարձրորակ ու մրցունակ կրթական ծառայությունների մատուցման: Աշխարհում հայտնի են մի շարք փոքրաթիվ ուսանողական համայնք ունեցող առաջատար բուհեր, սակայն դրանք հետազոտական շատ բարձր ուղղվածության բուհեր են, որոնցից յուրաքանչյուրի միջազգային հրապարակումները մեծ են ՀՀ բոլոր կազմակերպությունների հրապարակումների թվաքանակի հանրագումարից և դրանց դեպքում ֆինանսական հոսքերը մեծապես գալիս են հետազոտական պատվերների և ծառայությունների իրականացումից:

Որպես բարձրագույն կրթության ոլորտում ռազմավարական առաջնահերթություն սահմանված է պետական բուհերի խոշորացումը, բուհերի միջազգային դասակարգման ցանկերի առաջին 500-յակում մինչև 2030 թվականը առնվազն 4 բուհ (անկախ հիմնադրից) ունենալու նպատակը և կրթական ծառայությունների որակի բարձրացման հաշվին միջազգային ուսանողների քանակի առնվազն կրկնապատկումը: Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք հնարավորություն չեն տա հանրապետությունում առաջանալու և գործելու այնպիսի բուհերի, որոնք ապավինում են ոչ թե կրթական ծառայությունների մրցունակությանը որպես աշխատանքի սկզբունք, այլ դրա հնարավորինս ավելի հեշտացված տրամադրմանը:

Խոչընդոտ է հանդիսանում նաև բարձրագույն կրթության համակարգում բարձրագույն կրթության ծառայություններ մատուցող կազմակերպությունների կազմակերպական-տնտեսական ձևերի բազմազանությունը: 60 բուհերից 21-ը՝ հանդիսանում են հիմնադրամ, 17-ը՝ ՍՊԸ, 7-ը՝ ՊՈԱԿ, 5-ը՝ արտադրական կազմակերպություն, 4-ը՝ առանձնացված ստորաբաժանում, 3-ը՝ պետական հիմնարկ, 1-ը՝ միջպետական հիմնարկ, 1-ը՝ հիմնարկ, 1-ը՝ կրոնական կազմակերպություն:

Կազմակերպական ձևերի բազմազանությունը և հատկապես այդ ձևերի մեջ շահույթ հետապնդող կազմակերպական ձևերի առկայությունը բերում է նրան, որ ոլորտի կարգավորման հետ սկսվում են առնչվել և վերածածկվել կազմակերպական

ձևերին բնորոշ կարգավորումները, միևնույն ժամանակ, բարձրագույն կրթությունը չի դիտարկվում որպես շահույթ հետապնդող ոլորտ, ինչի պատճառով առաջատար մի շարք երկրներում կամ բացառվում է շահույթ հետապնդող բուհերի գոյությունը (Գերմանիա, Ֆրանսիա, Կանադա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Դանիա), իսկ հնարավորության դեպքում դրանք ունեն սահմանափակումներ պետական աջակցության ծրագրերից և գտնվում են հատուկ վերահսկողության ներքո, օրինակ՝ ԱՄՆ-ում շահույթ հետապնդող բուհերը պետք է համապատասխանեն "gainful employment" կարգավորումների, ինչը նշանակում է, որ վերջիններս պետք է ներկայացնեն բավարար հիմնավորումներ, որ իրենց ուսանողներն ավարտելուց հետո ի վիճակի կլինեն սպասարկելու կրթական վարկերը: Միացյալ Թագավորությունում բուհերի մեծամասնությունը հանդիսանում է շահույթ չհետապնդող և հանդիսանում են բարեգործական հիմնադրամներ, գոյություն ունեն մի քանի շահույթ հետապնդող բուհեր, սակայն դրանք զրկված են պետական ֆինանսավորումից, գտնվում են ուսանողների գրասենյակի (Office of Students) խիստ հսկողության ներքո և ունեն հեղինակային խնդիրներ և գործատուների և հանրության ընկալման տիրույթում:

Նման մոտեցման էությունը կայանում է նրանում, որ կրթական ծառայությունները, դրանց որակը և որակի շարունակական բարելավումը պետք է լինեն բուհերի առաջնահերթությունները, և այս պարագայում շահույթ հետապնդող կազմակերպական ձևի էությունը հակասում է այս սկզբունքների իրացմանը:

Բուհական համակարգը պաշտպանված չէ արտաքին միջամտությունից, ենթակա է քաղաքականացման վտանգին, այս իմաստով կա քաղաքական հանձնառություն հանրային կառավարման, քաղաքական պաշտոններում և կուսակցական անձանց մասնակցությունը սահմանափակելու բուհերի և գիտական կազմակերպությունների կառավարման մարմիններում, ինչի նպատակն է բուհական համակարգը զերծ պահելու քաղաքական գործընթացներից, քանի որ բուհական և գիտական հաստատությունների առաջնային խնդիրն է հանդիսանում կրթության իրավունքին անկողմնակալ ծառայությունը, անաչառ հետազոտական գործունեությունը և կարծիքների ու մոտեցումների բազմազանությունը, որոնց համար առնվազն կառավարման մակարդակում պետք է բացառել նշված դեպքերը, ինչը նաև հանդիսանում է սահմանադրական պահանջից բխող՝ բուհերի ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման հնարավորությունը և ինքնավարության ու ակադեմիական ազատությունների իրացման գործիքներից մեկը: Բուհերի կառավարման գործող սխեմայով հստակ կարգավորված չէ հոգաբարձուների խորհուրդներում արտերկրի առաջատար մասնագետների

ներգրավման հնարավորությունը, ինչը սահմանափակում է կառավարման բարձրագույն մարմինների ձևավորման հնարավորությունները:

Բուհական և գիտական կազմակերպությունների ներկայիս կառավարման համակարգը խիստ ուղղահայաց է, ինչը հակակշիռների և հավասարակշռված կառավարման տեսանկյունից խնդրահարույց է, միևնույն ժամանակ, էապես բացակայում է թափանցիկության և հաշվետվողականության գործիքակազմը:

Բարձրագույն կրթության համակարգում Բոլոնիայի գործընթացի մեկնարկից հետո չի ներդրվել նաև կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը, ինչը հանդիսանում է ուսանողների շարժունության հիմնական գործիքը, ինչպես նաև կրթական գործընթացն ավելի ճկուն դարձնելու կարևորագույն մեխանիզմը:

Գործող օրենսդրության մեջ անհարկի մանրամասնությամբ առկա են ձևակերպումներ, մասնավորապես, կրթական առարկաների մակարդակով, ինչն էականորեն խոչընդոտում է կրթական ծրագրերի ճկունությանը՝ անկախ կրթական ծրագրի նպատակից և վերջնարդյունքից: Շարունակում է պահպանվել կրթության կազմակերպման ժամանակավրեպ բաժանումը առկա և հեռակա ուսուցման համակարգերի, բացակայում են ուսանողների հնարավորությունները մասնակցելու իրենց կրթական ծրագրերի ձևավորմանը՝ ընտրելու դասընթացները, ուսումնառության ինտենսիվությունը (բեռնվածությունը) և տևողությունը ըստ իրենց անհատական ունակությունների, աշխատանքային զբաղվածության և ֆինանսական հնարավորությունների:

Օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն ունեն նաև բուհերի կրթական ծրագրերի լիցենզավորման հարցերը, որոնք չեն համապատասխանում մրցունակ և հետազոտահենք կրթության չափանիշներին: Ծրագրային հավատարմագրումը պարտադիր բնույթ չի կրում, ինչն էական ազդեցություն ունի կրթության որակի պատշաճ ապահովման վրա:

Պահպանվում է բուհերի ֆինանսավորման սխեման ըստ ուսանողների թվի, բուհի ենթակառուցվածքների զարգացմանը և կրթության որակի բարելավմանն ուղղված ֆինանսավորում չի իրականացվում, գործող օրենսդրությամբ չեն ապահովվում բուհերի պատշաճ ֆինանսական ինքնավարությունն ու ձեռնարկատիրական հնարավորությունները:

Ընդունելության գործող կարգավորումներով պետական պատվերի տեղերը հատկացվում են բուհերին՝ ըստ հաստատված մասնագիտությունների, իսկ ընդունելությունը բակալավրի կրթական մակարդակում իրականացվում է միասնական մրցույթի միջոցով՝ սահմանափակելով բուհերին մասնակցելու իրենց սովորողների ընտրությանը՝ այդ թվում հավելյալ պահանջների սահմանմամբ:

Կառավարման համակարգերը և մեխանիզմները չեն նպաստում ակադեմիական ազատությունների, ինքնակառավարման և հետազոտությունների ազատության դրսևորմանը: Օրենսդրորեն լիարժեք կարգավորված չեն բուհերի և գիտական կազմակերպությունների ինքնավարության և ակադեմիական ազատությունների իրացման երաշխիքները, հաշվետվողականության և հասարակական պատասխանատվության մեխանիզմները: Բուհերի և գիտական կազմակերպությունների կառավարման ներքին օղակներում մասնակցային միջավայրի բացակայությունը, ինչպես նաև մասնագետներին ներգրավելու բաց, թափանցիկ և ճկուն մեխանիզմների բացակայությունը, անցկացվող մրցույթների ֆորմալ բնույթը անդրադառնում են երիտասարդ մասնագետների առաջխաղացման վրա:

«Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքով նախատեսված են կարգավորումներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում փորձաքննության նորարարական ու ժամանակակից կամ փորձարարական մեթոդների կիրառման համար, ինչը խոչնդոտում է գիտության ոլորտի համադրելիությանը եվրոպական հետազոտական տարածքի հետ և որոշ դեպքերում սահմանափակում է ֆինանսավորման նոր ծրագրերի ներդրումը:

Վերոնշյալ փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ և լրացումներ կատարել նաև «Կրթության մասին», «Հիմնադրամների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին», «Փրկարար ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Դեղերի մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Լեզվի մասին», «Գնումների մասին», «Առանց ծնողական խնամք մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Պետական նպաստների մասին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

հարկային և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքերում: Արդյունքում համապատասխան օրենքներում նոր խմբագրությամբ են սահմանվում «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի բովանդակությունից բխող մի շարք հիմնական հասկացություններ, նոր կարգավորումնե, մասնավորապես.

- ««Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է նոր խմբագրությամբ սահմանել ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կամ կրթական ծրագրի հավատարմագրումը, բակալավրի որակավորումը, մագիստրոսի որակավորումը, կլինիկական ռեզիդենտը (կլինիկական օրդինատորը),
- ««Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է ամրագրել, որ բարձրագույն ուսումնական հաստատության իրավական կարգավիճակի, ստեղծման, գործունեության, վերակազմակերպման, կառավարման մարմինների, դրանց ձևավորման և լիազորությունների, գույքի օգտագործման ու ֆինանսատնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով,
- ««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է ամրագրել, որ պետության հիմնադրած՝ բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կամ գիտական կազմակերպության կառավարման մարմինները ձևավորվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքին համապատասխան,
- ««Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է «բարձրագույն մասնագիտական (բակալավր, մագիստրոս)» բառերը փոխարինել «բարձրագույն կրթության մակարդակների (բակալավր, մագիստրոս, դոկտոր)» բառերով, իսկ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» բառերը՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» բառերով, ինչպես նաև լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի «9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում մի շարք կետեր խմբագրվել են նոր շարադրությամբ,
- ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է «բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար» բառերը փոխարինել «բարձրագույն կրթության

առաջին մակարդակին (բակալավր) համապատասխան կրթական ծրագիր իրականացնելու համար» բառերով, «մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար» բառերը փոխարինել «բարձրագույն կրթության երկրորդ մակարդակին (մագիստրոս) համապատասխան կրթական ծրագիր իրականացնելու համար» բառերով, ինչպես նաև լրացնել երկու նոր ենթակետ, որոնք սահմանում են բարձրագույն կրթության երրորդ մակարդակին (դոկտոր) համապատասխան կրթական ծրագիր իրականացնելու համար՝ տարեկան և բարձրագույն կրթության ծառայությունների իրականացման համար պետական տուրքի դրույքաչափերը,

➢ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» բառերով, «առկա ուսուցմամբ» բառերը փոխարինել «լրիվ բեռնվածությամբ» բառերով, իսկ «օրդինատուրայում» բառը փոխարինել «ռեզիդենտուրայում» բառով և այլն:

<u>2. Առաջարկվող կարգավորման բնույթը</u>

Վերը նշված օրենսդրական բացերը լրացնելու և բարձրագույն կրթության և գիտության ոլորտների համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականության ձևավորման և իրականացման հիմքերը և պայմանները ապահովելու նպատակով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծում սահմանվում են՝ բարձրագույն կրթության և գիտության համակարգում նոր իրավական, կազմակերպական և ֆինանսական հարցերի հետ կապված հարաբերություններ, ներառյալ ակադեմիական քաղաքին և գիտական փորձաքննությանը վերաբերող հարաբերությունները՝ արտացոլելով բարեփոխումների ընթացքը: Օրենքի նախագծում ամրագրվել են դրույթներ, որոնք միտված են բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացման, այդ թվում՝ գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման, որպես գիտահետազոտական ինստիտուտներ, բուհերի կազմում ընդգրկվելու, համագործակցության և աստիճանական ինտեգրման, հետազոտական ցանցեր և կոնսորցիումներ ձևավորելու իրավական հիմքեր ստեղծելուն՝ ապահովելու որակյալ բարձրագույն կրթություն և հետազոտական արդյունքներ:

Այսպես՝

• գործող օրենքների համեմատությամբ սահմանվել են նոր հասկացություններ կամ դրանք շարադրվել են նոր խմբագրությամբ, մասնավորապես, գիտական գործունեություն, նորարարական գործունեություն, փորձաքննություն, ակադեմիական միավոր, համատեղ կրթական ծրագրեր, ինտեգրված ծրագիր,

հեռավար ուսումնառություն, կարգավորվող մասնագիտություններ, որակավորումների մասնագիտական շրջանակ, միկրոորակավորումներ, կրթաթոշակ, ուսանողի փորձառություն և այլն.

- ամրագրվել են ակադեմիական բարեվարքություն, ակադեմիական ազատություն, գիտական կազմակերպությունների և բուհական ինքնավարություն, ակադեմիական գործունեություն, ինչպես նաև մատչելի միջավայր, ներառականություն հասկացությունները, դրանց կիրառման մեխանիզմները.
- որպես բարձրագույն ուսումնական հաստատության առանձին տարատեսակ է սահմանվել հետազոտական համալսարան հասկացությունը, որը բուհական կրթությանը զուգահեռ ապահովելու է հետազոտական մեծ բաղադրիչ, ինչպես նաև այս բուհերի համար սահմանվել են բուհական ձեռնարկատիրության հնարավորություններ՝ սկսած ուսանողական նախաձեռնությունների աջակցությունից, մինչև բուհում ստեղծված տեխնոլոգիաների առևտրայնացման հնարավորությունները.
- վերասահմանվել են բուհերի գործառույթները, հաշվետվողականության ու որոշումների կայացման թափանցիկության պահանջները՝ ապահովելու հաստատության պատասխանատվությունը և հաշվետվողականությունը պետության ու հասարակության առջև, ֆինանսական ինքնավարության սահմաններն ու դրա երաշխիքները, նախատեսվում է բարձրագույն ուսումնական հաստատություն առանձին կարգավիճակի սահմանում, ոչ առևտրային կազմակերպության՝ հիմնադրամի կազմակերպական-իրավական տիպի, որի գործունեության առանձնահատկությունները կարգավորվելու են սույն օրենքով և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով.
- Օրենքի մակարդակով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում լիցենզավորմանը և հավատարմագրմանը, որպես բարձրագույն կրթության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցումը երաշխավորող պետական գործիքներ: Ներմուծվել է լիցենզավորման նոր տեսակ՝ բուհի լիցենզավորում, ինչը հանդիսանում է բուհական գործունեություն իրականացնելու մուտքային լիցենզիա, որով կսահմանվեն բուհին ներկայացվող հիմնական պահանջները՝ սկսած շենքային և գույքային պահանջներից, մինչև ակադեմիական կազմի և կրթական ու հարակից միջավայրի նորմերից: Հաշվի առնելով բարձրագույն կրթության ոչ միայն դասավանդման և ֆորմալ բաղադրիչը, այլ նաև կարևորելով ուսանողի ամբողջական փորձառությունը բուհական համակարգում՝ բուհական կրթության իրավունքի համար անհրաժեշտ կլինի ներկայացնել ենթակառուցվածքներ, որոնք հնարավորություն կունենան հաստատությանը ներգրավելու առնվազն 4000 ուսանողների, ինչով

կլուծվի փոքր և ոչ կենսունակ բուհերի խնդիրը, որոնք ի վիճակի չեն մատուցելու որակյալ և ժամանակակից կրթական ծառայություններ.

- սահմանվել են գիտական կազմակերպությունների տարատեսակները, ամրագրվել դրանց գործունեության, ինքնավարության, ազատությունների, հաշվետվողականության շրջանակներն ու երաշխիքները, այդ թվում՝ համալսարանների կազմում գործող գիտական կազմակերպությունների, համատեղ գիտական աշխատանքներ և ծրագրեր իրականացնելու հնարավորությունները, նաև օտարերկրյա կազմակերպությունների հետ, համալսարանի կրթական ծրագրերին մասնակցության պահանջը՝ ապահովելու որոշակի կրեդիտներ ուսանողների հետազոտական և ակադեմիական մոդուլների մասով.
- սահմանվել են բուհերին և գիտական կազմակերպություններին պետական աջակցության տրամադրման ձևերը (ինստիտուցիոնալ (բազային) ֆինանսավորում՝ ենթակառուցվածքների զարգացման, նորարարական ծրագրերի և գիտական հետազոտությունների, կրթության որակի բարելավման նպատակով, մրցակցային ֆինանսավորում՝ նորարարական-նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար՝ մրցութային հիմունքներով).
- սահմանվել են բարձրագույն կրթության երեք մակարդակներ, որոնցում ուսումնառության հաջող ավարտին շնորհվում են համապատասխանաբար բակալավրի, մագիստրոսի և դոկտորի որակավորումներ, նախատեսվում է ներկայիս ասպիրանտական ծրագրերը համապատասխանեցնել համաեվրոպական չափանիշներին՝ դրանք ընդգրկելով բարձրագույն կրթության համակարգում որպես որակավորման երրորդ աստիճան (PhD): Ըստ այդմ, այդ մակարդակում կրթություն կարող են իրականացնել միայն համալսարանները՝ իրենց կազմում գործող համապատասխան գիտական կազմակերպության հենքի վրա.
- ամրագրվել են կարգավորումներ, որ բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագրերը՝ ըստ կրթական մակարդակների, կարող են իրականացվել ուսանողի լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ, այդ թվում՝ հեռավար ուսումնառության ձևերով: Սա հնարավորություն կտա ուսանողներին կարգավորել իրենց ուսումնառության ինտենսիվությունը (բեռնվածությունը)՝ պայմանավորված իրենց ընդունակություններով, զբաղվածության աստիճանով և ֆինանսական հնարավորություններով.
- ստեղծվել է իրավական հենք, ըստ որի երկու և ավելի բուհեր (այդ թվում՝ օտարերկրյա) կարող են համատեղ մշակել և իրականացնել կրթական ծրագիր և շնորհել բարձրագույն կրթության որևէ մակարդակի որակավորում, որը հավաստվում է մասնակից բուհերի կողմից շնորհված միասնական ավարտական փաստաթղթով

(դիպլոմով) կամ մասնակից բուհերից մեկի կամ բոլորի առանձին ավարտական փաստաթղթերով (դիպլոմներով), առանձին կրթական ծրագրեր, դասընթացներ կամ դասընթացների առանձին թեմաներ կամ ուսումնական մոդուլներ կարող են դասավանդվել օտար լեզվով, ինչը կնպաստի բարձրագույն կրթության միջազգայնացմանը.

• Նախագծում սահմանվել են բուհերի լիցենզավորման և հավատարմագրման նոր հիմունքներ, որոնք բխում են ոլորտներում իրականացվող պետական քաղաքականության սկզբունքներից, միջազգային չափանիշներին համապատասխան կրթական միջավայր ապահովելուն միտված՝ շեշտադրելով ուսանողի փորձառության ապահովումը բուհական համակարգում (այսինքն ցանկացած բուհում սովորելիս, սովորողը պետք է ունենա համադրելի փորձառություն student experience), ինչի էությունը կայանում է ուսանողական համայնքի՝ սովորելու համար ոչ ֆորմալ միջավայրի ապահովման, արտաուսումնական և հետազոտական ենթակառուցվածքների հասանելիության, դրանց ժամանակակից չափանիշներին համապատասխանության, կրթական ծրագրերը մատուցող ակադեմիական կազմի մասնագիտական համադրելի մակարդակների, կրթական ծրագրերի բովանդակության և կրեդիտների կշիռների համադրելիության, այդ թվում միջազգային շարժունության ապահովման, ինչպես նաև կրթական գործընթացից զատ ուսանողի համար նախատեսված սոցիալական, մշակութային, մարզական և ժամանցային միջավայրի երաշխավորման մեջ.

• Նախագծով սահմանվել են նաև բուհեր ընդունելության նոր սկզբունքներ ու մեխանիզմներ՝ բարձրագույն կրթության երեք մակարդակներում ընդունելության և մրցույթի անցկացման իրավասությունները վերապահելով բուհերին, ընդ որում կրթության որակն հավաստող մուտքային շեմն ապահովելու նպատակով անկախ բուհերի կազմակերպական-իրավական ձևից և կարգավիճակից բակալավրի որակավորման աստիճանի ցանկացած կրթական ծրագրով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձանց համար «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից արտաքին գնահատման առնվազն «լավ» գնահատականին համարժեք գնահատականով վկայագրերը պարտադիր են: Լիազորություններ են վերապահվել Կառավարությանը՝ սահմանելու բազմատեսակ կրթաթոշակի տրամադրման սկզբունքները, որի նպատակն է առաջադիմության խթանումը և կրթություն ստանալու համար պետական աջակցության տրամադրումը՝ առաջադիմության և գերազանցության նախապայմանով: Բուհերի համար սահմանվել է իրենց առաջացրած եկամուտի որոշակի բաժնի հաշվին՝

առաջադիմության հիման վրա ուսանողների կրթության վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման համար.

- Նախագծով դրույթներ են նախատեսվել ուսանողների իրավունքների և պարտականությունների, ուսանողական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ, սահմանվել է, որ ուսանողը ունենում է իր անհատական թվանիշային տիրույթը բարձրագույն կրթության և գիտության կառավարման համակարգում, որի միջոցով կառավարում է իր կրթական գործընթացը՝ ներառյալ անհատական կրթական պլանի կազմումը՝ կրեդիտների հսկողությունը, ինչպես նաև օգտվում է իրեն հասանելիք արտոնություններից.
- Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենքի նախագծով նախատեսվում է հանրային բուհերի, գիտական կազմակերպությունների կառավարման մոդելների, կառավարման մարմինների (հոգաբարձուների խորհուրդ, կառավարման խորհուրդ, ակադեմիական խորհուրդ, գիտական խորհուրդ, գործադիր մարմին՝ ռեկտոր, տնօրեն, բուհի կառուցվածքային միավորների գիտական խորհուրդները և այլն) ձևավորման սկզբունքների, ներկայացվող պահանջների փոփոխություններ և սահմանափակումներ, նրանց լիազորությունների հստակեցում և հավասարակշռում, ամրագրվել են անկախ մարմնի՝ Էթիկայի կոմիտեի ձևավորմանն առնչվող դրույթներ, ակադեմիական բարեվարքության և էթիկայի կանոնակարգի պահանջներին հետևելու պարտավորություններ, չհետևելու դեպքում՝ հետևանքներ: Ընդ որում, բուհի և դրա կառուցվածքային միավորների կառավարման մարմիններում կամ կառավարման կոլեգիալ մարմիններում արգելվում է կուսակցական անձանց ներգրավումը, նման հանգամանքի առաջացումը հիմք է հանդիսանում նշված պաշտոններից անձի ազատման համար: Միաժամանակ, նախատեսվել է նաև տարիքային սահմանափակում հանրային բուհերի և գիտական կազմակերպությունների ռեկտորների ու տնօրենների համար: Այդ պաշտոններում ընտրված անձանց լիազորությունները, վերջինիս 65 տարին լրանալիս, իրավասու մարմնի որոշմամբ դադարեցվում են.
- Նախագծում կարգավորվել են նաև Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գործունեությանը, կարգավիճակին առնչվող հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի Հանրապետության հիմնադրած ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որն իր կազմում միավորում է Ակադեմիայի անդամներին, Ակադեմիայի գիտական բաժանմունքները, Ակադեմիայի աշխատակազմը, Ակադեմիայի պատվավոր և արտասահմանյան անդամներին և

Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների պատվավոր առաջատար և պատվավոր գլխավոր գիտաշխատողներին:

• Նախագծում առանձին հոդվածով ամրագրվել են Ակադեմիական քաղաքին, որպես ուսումնական հաստատությունների, գիտական ու արտադրական կազմակերպությունների միջև ցանցային համընթաց համագործակցություն ապահովող անվտանգ և ժամանակակից միջավայրի՝ համապատասխան բազմաֆունկցիոնալ ենթակառուցվածքներով, առնչվող կարգավորումներ: Սահմանվել է, որ Ակադեմիական քաղաքի կառուցապատման, զարգացման հայեցակարգի իրականացման, մշտադիտարկման աշխատանքները ինչպես նաև կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության ստեղծած «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը: Ակադեմիական քաղաքի տեղակայման համար Օրենքի նախագծով նախատեսվել են առնվազն 700 հա մակերեսով տարածքներ, որենք կազմված են Երևան քաղաքի 17-րդ թաղամասին հարող տարածքից (մոտ 675 հա) և Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքից (մոտ 25 հա), որոնց գումարային մակերեսը կազմում է շուրջ 700 հա, որի 580 հեկտարի համար արդեն իսկ իրականացվել են գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները՝ մնացյալ մակերեսները նախատեսելով հետագա ընդլայնման և օգտագործման ոչ ենթակա տարածքների համար.

• Նախագծում սահմանվել են նաև եզրափակիչ և անցումային դրույթներ.

• ուժը կորցրած են ճանաչվելու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին», «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքները.

• «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերում ամրագրվել են վերոնշյալ փոփոխությունները, լրացումներն ու նոր կարգավորումները:

<u>3. Ակնկալվող արդյունքը</u>

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում իրականացվող բարեփոխումների, անհրաժեշտ քաղաքականության մշակման համար իրավական հիմքերի, սկզբունքների, պայմանների, լիազորող նորմերի, միասնական կարգավորումների առկայություն՝

նպաստելով ««Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով նախանշված թիրախներին հասնելուն՝ դրանք են՝

- բարձրագույն կրթության և գիտության ոլորտում առաքելությամբ առաջնորդվող, մրցունակ և դիմակայուն համակարգերի ձևավորմանը, կրթության որակի շարունակական բարելավմանը և ժամանակի պահանջներին համահունչ կրթության կազմակերպմանը նպաստելը.
- բարձրագույն կրթության և գիտության ոլորտում ներգրավված դերակատարների ակադեմիական ազատություններ և ինքնավարության երաշխավորումը.
- բուհական և գիտական համակարգում շարժունության ապահովումը, այդ թվում՝ ժամանակակից և համադրելի ընթացակարգերի սահմանմամբ.
- լավագույն կրթության, լավագույն կրթական փորձառության, հետազոտական և փորձարարական առավել մրցունակ պայմանների երաշխավորումը և վերահսկողությունը, ինչպես նաև նոր գիտելիքի ստացմանը նպաստող միջավայրի ձևավորումը.
- աշխատանքի շուկայում ռելևանտության, նորարարական պոտենցիալի մաքսիմալ դրսևորման և տնտեսական առավելագույն ազդեցությանը նպաստելը.
- հետազոտական աշխատանքներում երիտասարդների ներգրավման մեխանիզմների ներդրումը և սերնդափոխության արդյունավետ գործիքակազմի կիրառումը:

<u>4. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</u>

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը մշակվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից, որին նախորդել է նույն օրենքի նախագծի շրջանառությունը, ԱԺ կողմից 24.03.2021[11] թվականի նիստում երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունումը և Սահմանադրական դատարանի կողմից որոշ դրույթների առումով հակասահմանադրական ճանաչվելը:

<u>5. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ</u> առաջանում է այլ իրավական ակտերի ընդունման և գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն:

---

[11] Կ-797-04.12.2020-ԳԿ-011/1

6. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ»

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունումը բխում է՝

1. Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազամավարության 1-ին «Կիրթ և կարողունակ քաղաքացի» ունենալու մեգանպատակի թիրախային արդյունքային ցուցանիշներին հասնելու պահանջից,

2. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով սահմանված պահանջներից, մասնավորապես, Հոդված 1-ով հաստատված հավելված 1-ի՝

1) 86-րդ մասի 13-ից 19-րդ և 23-րդ կետերից, որոնց էությունը կայանում է միջազգային մակարդակում մրցունակ, ժամանակակից աշխարհում աշխատանքի և մասնագիտական կայացման համար պատրաստ անհատի ձևավորումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական չափանիշներին համապատասխան հավաստագրումը, միջազգային վարկանիշավորման ցանկերում առաջխաղացումը, ուսանողի պատշաճ կեցության և կրթական միջավայրի կազմակերպումը, կրթություն-գիտություն կապի ամրապնդումը և համակարգի պետական ֆինանսավորման դիվերսիֆիկացումը և թիրախայնությունը.

2) 81-րդ մասի 2-րդ կետի «ը» և «թ» պարբերություններից, որոնցով նախատեսվում է պետական բուհերի խոշորացում և գիտական կազմակերպությունների հետ միավորում, ինչպես նաև բուհերի կառավարման նոր մոդելների գործարկում և կառավարիչների հմտությունների բարձրացում.

3) 82-րդ մասի 4-րդ կետի «է», «ը», «թ» և «ժա» պարբերություններից, որոնցով նախատեսվում են նաև բուհական կրթական ծրագրերի խոշորացում, ուսանող/դասախոս հարաբերակցության կարգավորում, ուսանողներին տրամադրվող պետական թիրախային աջակցության տրամադրում և համալսարանական ինկուբատորների և ձեռնարկատիրական էկոհամակարգի ձևավորում:

3. ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» և «4.4 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնների բարձրագույն կրթության և գիտության բարեփոխումներին առնչվող դրույթներից և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ (N 1 հավելված) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության

կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Կրթություն» և «Գիտություն» բաժինների նպատակներից, մասնավորապես՝

1) արդյունավետ կառավարման, հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ինստիտուցիոնալ հենքի ստեղծման նպատակից .

2) բարձրագույն կրթության որոկի շարունակական բարելավմանը, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական բաղադրիչի մեծացմանն ուղղված նպատակից.

3) բարձրագույն կրթության միջազգայնացման, շարժունության հնարավորությունների ընդլայնման նպատակից.

4) բարձրագույն կրթության ֆինանսավորման աստիճանական ավելացման նպատակից.

5) բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայման նպատակից.

6) գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված նպատակից.

7) մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակից.

8) գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված նպատակից: